

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
CHILD DEVELOPMENT FOUNDATION

World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

## Ովքեր կարող են դիմել

- Անհետ կորած անձանց կամ ռազմագերիների ծնողներ, ընտանիքի անդամներ,
- Գերության մեջ գտնված անձինք,
- Ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում կամ հաշմանդամություն ստացած անձինք, ընտանիքի անդամներ,
- Զոհված զինծառայողների կամ քաղաքացիական անձանց ընտանիքի անդամներ,
- Ռազմական գործողություններին մասնակցած ժամկետային զինծառայողներ, զորահավաքային զորակոչով ներգրավվածներ և կամավորականներ,
- Արցախից տեղահանվածներ:

## Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառում. Աջակցության տրամադրման կարգը

- Շահառու՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող կամ Արցախում գտնվող Արցախի քաղաքացիներին, որոնք ունեն Արցախի հաշվառում:
- Օժանդակության ձևը՝ միանվագ դրամական օգնություն յուրաքանչյուր շահառուի համար նվազագույն ամսական աշխատավարձի չափով (68,000 ՀՀ դրամ), ինչպես նաև կեցավայրի համար տրամադրվում է լրացուցիչ աջակցություն՝ 15,000 դրամի չափով այն շահառուներին, ովքեր չունեն սեփականության (այդ թվում՝ բաժնային) իրավունքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույք:

*Բացառություններ՝*
Արցախի հաշվառում ունեցող հետևյալ քաղաքացիները չեն կարող հանդիսանալ սույն միջոցառման շահառու՝
1) Արցախի պետական կամ համայնքային բյուջեից աշխատավարձ ստացող անձինք:
2) Հայաստանի Հանրապետությունում աշխատող անձինք կամ անհատ ձեռնարկատերեր:

Դիմումը ներկայացվում է https://dimum.ssa.am/ կայքէջի միջոցով:
*Միանվագ դրամական օգնությունը տրամադրվում է Հայփոստի միջոցով:*

**Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման ծրագիր**

- Ծրագրում կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2021-Լ որոշումներով շահառու հանդիսացող գործազուրկ անձինք:
- Մեկ աշխատանքային օրվա համար վճարվում է 8 000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը:
- Ծրագրի արժեքը չի կարող գերազանցել 2,000.0 հազ. դրամը:

## Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիր

- Ծրագրի շրջանակներում շահառու է համարվում ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2021-Լ որոշումներով շահառու հանդիսացող գործազուրկ անձը:
- Շահառուն ծրագրում կարող է ընդգրկվել մեկ անգամ՝ 3 ամիս տևողությամբ:
- Ամսական աշխատավարձի չափը՝ 100 հազար դրամի չափով:

**Հեռավար ուսուցման համակարգ**

«Ինչպես փնտրել աշխատանք» էլեկտրոնային անվճար դասընթացը հասանելի է www.employment.am կայքում:

## ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբ

Կարող են դիմել Արցախի տարբեր շրջանների բնակիչները՝ բնակարանի, սննդի, դեղորայքի և սոցիալական բնույթի այլ հարցերով: Այստեղ արցախցիներին ուղղորդում են նաև խորհրդատվությամբ: Շտաբը տեղեկացնում է, որ ՀՀ-ում ժամանակավորապես բնակություն հաստատած ԱՀ բնակիչները բժշկական հետազոտման, ախտորոշման, բուժման նշանակման և վիրահատական միջամտության համար կարող են ըստ բնակության վայրի դիմել՝ համապատասխան պոլիկլինիկաներ, անվճար սպասարկման համար:

Գարեգին Նժդեհի 23/1, Երևան, Հայաստան
aasw.org/hy

## ԼՂՀ մշտական ներկայացուցչություն Հայաստանում

Մշտական ներկայացուցիչ՝ պարոն Կառլեն Ավետիսյան

Հասցե՝ Ն.Զարյանի փող., 17 ա, ք.Երևան, Հայաստան
Հեռ.՝ (+374 10) 249928
Էլ. հասցե՝ ankr@arminco.com

## «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական ՀԿ

Կենտրոնը գործում է բարեգործական հիմունքով՝ բացարձակ անվճար միայն վիրավոր զինվորների, զինհաշմանդամների և ծառայության հետևանքով առողջական խնդիրներ ձեռք բերած ՀՀ քաղաքացիների համար: Ամբուլատոր պայմաններում անվճար բուժում կարող են ստանալ նաև զոհված ազատամարտիկների երեխաները:

Բուժում ստանալուց բացի կենտրոնում լուծվում են նաև զինվորների սոցիալական խնդիրները: Իրականացվում են բազմաթիվ սոցիալական, կրթական ծրագրեր, լուծվում են զինհաշմանդամների սոցիալական ինտեգրացիայի, աշխատանքի տեղավորման հարցերը:

https://www.helpheroes.am/
helpheroesarmenia@gmail.com
+374 11 202520
Հասցե՝ Աբովյան 58, Թիվ 1 Հիվանդանոցի տարածքում

## Մանկական պարգացման հիմնադրամ

Հիմնադրամը մատուցում է հոգեբանի, հատուկ մանկավարժի, լոգոպեդի, արտ-թերապևտի, ֆիզիոթերապևտի և սոցիալական աշխատողի մասնագիտական ծառայություններ պատերազմից տուժած երեխաներին:

Հիմնադրամը իրականացնում է նաև սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ ինչպես ծնողների, այնպես էլ երեխաների պաշտպանության, կրթական և համայնքային կարգացման ոլորտում աշխատող մասնագետների համար:


Հասցե՝ Ռոմանոս Մելիքյան 1

http://cdf.am/

+374 95 004186

info@cdf.am




## Հայ օգնության ֆոնդի Երեխաների աջակցության կենտրոն հիմադրամ (ՀՕՖ ԵԱԿՀ)

ՀՕՖ ԵԱԿՀ-ն ճգնաժամի միջամտության և վերականգնողական ծառայություններ է մատուցում 3-18 տարեկան այն երեխաներին, ովքեր ունեն.

### 1. Ապաստանման կարիք

Ծառայությունը կարճաժամկետ է և տրամադրում է 7/24 ռեժիմով խնամք և պաշտպանություն, ինչպես նաև.

- ✓ Սոցիալ-մանկավարժական աջակցություն,
- ✓ Հոգեբանական աջակցություն,
- ✓ Մանկաբույժի աջակցություն,
- ✓ Իրավաբանական խորհրդատվություն:

### 2. Սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք

Տրամադրվում է ինչպես կենտրոնում ապաստանված երեխաներին, այնպես էլ կենտրոնից դուրս գտնվող մտահոգության առարկա հանդիսացող երեխաներին:

Այդ ծառայություններն են.

- ✓ Անհատական և ընտանեկան խորհրդատվություն,
- ✓ Միջամտություն ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարմանը,
- ✓ Միջամտություն և աջակցություն համապատասխան ծառայություններին հասանելիություն ապահովելու համար,
- ✓ Հմտությունների պարգացում,
- ✓ Աջակցություն իրավունքների իրացմանը մտահոգության առարկա հանդիսացող երեխաների և նրանց ընտանիքների ինտեգրման գործընթացում:

**3. Դիմակայության և ճկունության պարգացման անհրաժեշտություն:**
Ծառայությունը հասանելի է ինչպես Կենտրոնում ապաստանված, այնպես էլ կենտրոնից դուրս գտնվող մտահոգության առարկա հանդիսացող երեխաներին: Այն անհատական և խմբային արտթերապիայի միջոցով պարգացնում է ստեղծագործական մտածելակերպը, խթանում ինքնարտահայտումը, նպաստում ինքնագնահատականի բարձրացմանը, ակտիվացնում ինքնապաշտպանական մեխանիզմները:

Հասցե՝ Կարապետ Ուլնեցի փ. 64, ք. Երևան, Հայաստան
Հեռ.՝ (060) 540 150, (095) 240 150
Թեժ գիծ՝ (0800) 61 111
Էլ. փոստ՝ farz@far.am
Վեբ-կայք՝ www.farusa.org

## «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ

Պատերազմից տուժածներին սոցիալական, բնաիրային և հոգեբանական աջակցություն ՀՀ մարզերում և Երևանում:
Հեռ.՝
044 470190
044 701 910



## Հայկական Կարմիր խաչի ընկերություն

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Ղարաբաղյան հակամարտության սրացման առաջին իսկ օրերից մարդասիրական օգնություն է տրամադրում անվտանգության նկատառումներով տեղահանված անձանց՝ ՀՀ ամբողջ տարածքում: Աջակցության ոլորտներն են.

- Սննդի և հիգիենիկ պարագաների տրամադրում
- Ոչ-սննդային պարագաների տրամադրում
- Հագուստի տրամադրում
- Սոցիալ-հոգեբանական խմբային և անհատական ծառայություններ մեծահասակների և երեխաների համար
- Երեխաների դիմակայունությանն ուղղված միջոցառումներ՝
- խմբային հանդիպումներ, կրթական և սոցիալական միջոցառումներ, բակային ճամբարներ
- Կրթության հասանելիության ապահովում (պլանշետների տրամադրում)
- Դասապատրաստումներ, դպրոցներում դասասենյակների վերանորոգում/կահավորում
- Համայնքներում գնահատում և աջակցություն, ենթակառուցվածքների բարելավման ծրագրերի իրականացում
- Պաշտպանության մոնիթորինգի իրականացում

Հասցե՝ Պարոնյան փ. 21/1, ք. Երևան, Հայաստան
Թեժ գիծ և հոգեբանական աջակցություն՝
8184, 060 625069, 060627070
www.redcross.am
redcross@redcross.am

## Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա

Վայոց ձորի և Սյունիքի մարզեր:
Արցախահայերի համար հումանիտար և մարդասիրական աջակցություն:
**Թեժ գիծ՝ 044 086 111**

Կոտայք, Արարատ և Երևան:
Արցախահայերի համար ոչ խրոնիկ հիվանդությունների դեպքում բժշկական հաստատությունների ճանապարհածախսերի փոխհատուցում և դեղորայքի տրամադրում:
**Թեժ գիծ՝ 044 086 111**

Երևան:
Դժվարին կացության մեջ գտնվող արցախահայ երեխաների ժամանակավոր կացություն:
**Թեժ գիծ՝ 060 540 150, 095 240 150**

aasw.org/hy

## «Հոգեկան առողջության անհետաձգելի մասնագիտական աջակցության գիծ» ծառայություն

Ովքեր կարող են դիմել՝

- վիրավոր կինծառայողներ,
- զոհվածների ընտանիքների անդամներ,
- մարտական գործողությունների հետևանքով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կինծառայողներ:

Հասցե՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի փողոց 55 ա
Թեժ գիծ՝ 060 834777

## «Հոգեսոցիալական կարգավորման կենտրոն» ՀԿ

**Հեռ.՝ 010 544077, 077 058751, 099 54 44 77**
**Հոգեբանական թեժ գիծ՝ 060 834 777**

Անվճար օգնության տրամադրում բոլոր այն անձանց, ովքեր պատերազմի հետևանքով առաջացած հոգեկան առողջության խնդիրներ ունեն:

*Այդ անձինք են՝*

- վիրավոր զինծառայողները,
- զոհվածների ընտանիքների անդամները,
- մարտական գործողությունների հետևանքով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող զինծառայողները,
- տեղահանված հայրենակիցները:



*Ծառայություններ*

- Անհատական հոգեբանական աջակցություն, հոգեթերապիա,
- Խմբային հոգեբանական աջակցություն, հոգեթերապիա,
- Առցանց կամ հեռախոսով տրամադրվող հոգեբանական աջակցություն,
- Հոգեբանների շարժական խմբերի ծառայություն,
- էլեկտրոնային հարթակների միջոցով հոգեբանական աջակցություն:

## «Հոգեբանների հայկական գիտական միավորում» ՀԿ

Նարինե Խաչատրյան, հեռ.՝ 091 300 469, Աննա Հակոբջանյան, հեռ.՝ 095 473 029

## «ԱՅԳ» հոգեբանական ծառայությունների կենտրոն

Կենտրոնը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանավորությամբ տրամադրում է ԱՆՎՃԱՐ հոգեբանական խորհրդատվության և հոգեթերապիայի մասնագիտական ծառայություններ՝

- պատերազմի ժամանակ զոհված, գերեվարված և անհետ կորած զինծառայողների և քաղաքացիական անձանց ընտանիքներին,
- պատերազմի մասնակիցներին, պատերազմը վերապրածներին, վիրավորում ստացած անձանց և նրանց ընտանիքներին,
- պատերազմական գոտու բնակավայրերից տարհանված ընտանիքներին:

Հոգեբանական խորհրդատվությունն իրականացվում է թե առկա, և թե օնլայն տարբերակներով: Անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրվել նաև լոգոպեդական խորհրդատվություն:

Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է կանգահարել՝

- Վանաձոր և հարակից բնակավայրեր՝ 093 357444,
- Գյումրի և հարակից բնակավայրեր՝ 093 159470 և 0312 59470,
- Իջևան և հարակից բնակավայրեր՝ 094 343900,
- Կապան և հարակից բնակավայրեր՝ 077 898911,
- Երևան և մյուս բոլոր բնակավայրեր՝ 010 581814, 077 581814, 096 581814, 055 581814,
- Օնլայն խորհրդատվության համար՝ Skype օգտանուն՝ ayg.hogeban
- Viber, WhatsApp՝ +37495 51 51 55

## MHS հոգեկան առողջության կենտրոն

**«Դեպի կյանք» ծրագիր**

**Թեժ գիծ՝ 099 117 975**

Ծրագիրն ուղղված է

- Ռազմական գործողությունների արդյունքում տուժած անձանց,
- Պայթյունների, վիրավոր անձանց և այլ պատերազմական գործողությունների ականատեսներին,
- Պատերազմի պատճառով վախերի, անհանգստությունների հաղթահարմանը,
- Պատերազմին մասնակից անձանց, ովքեր տարօրինակ վարք են ցուցաբերում,
- Վիրավորում ստացած և նոր իրավիճակին, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրման դժվարություններ ունեցող անձանց,
- Զոհված անձ ունեցող ընտանիքներին, ում կորստի զգացումը անհաղթահարելի սգի, տխրության, դեպրեսիայի պատճառ է ընտանիքի այլ անդամների համար:

## «Ինթրա» հոգեբանական ակումբ ՀԿ

**Թեժ գիծ՝ 094 813177**

Ովքեր կարող են դիմել՝

- վիրավոր զինծառայողները,
- զոհվածների ընտանիքների անդամները,
- մարտական գործողությունների հետևանքով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող զինծառայողները:



## «Հույսի Կամուրջ» ՀԿ

Պատերազմից տուժած անձանց հոգեբանամանկավարժական  աջակցություն Տավուշում: Արցախից   ժամանած ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող և հատուկ կարիքներով երեխաներին տրամադրվում է անվճար հոգեբանական և հատուկ մանկավարժական աջակցություն և արտ-թերապիա:

Հասցեներ՝
- Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Զորավար Անդրանիկի 1, (0266) 2-36-70:
- Տավուշի մարզ, ք. Բերդ, Հայկ Նահապետի 6ա, (0267) 2-19-75:
- Տավուշի մարզ , ք. Իջևան, Բլբուլյան 4-րդ նրբ. 2, (0263) 4-56-16:
- Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Շահումյան 15, (0268) 2-36-50:

## «Ապագա» հոգեբանական ծառայություն

Հոգեբանական աջակցություն պատերազմից տուժածներին և նրանց ընտանիքի անդամներին՝
- Տավուշում պատերազմից տուժած անձանց,
- անհետ կորածների կամ ռազմագերիների ծնողներին, ընտանիքի անդամներին,
- տարեց անձանց, նրանց ընտանիքի անդամներին,
- ռազմական գործողությունների ընթացքում վիրավորված կամ հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամներին,
- սպանված պինծառայողների կամ քաղաքացիական անձանց ընտանիքի անդամներին,
- պատերազմին, ներառյալ՝ կորահավաքին ներգրավված անձանց:

Հեռ.՝ 077 083084, 091 201601, 094 800970, 094 019161, 077 735399:

## ԹԵԺ ԳԾԵՐ ԵՎ ԿԱՅՔԵՐ

- Սոցիալական ապահովության ծառայության  համար՝
  114
- Մարտական գործողությունների մասնակից անձանց և նրանց ընտանիքներին, ինչպես նաև տուժած քաղաքացիներին անվճար առցանց (օնլայն) հոգեբանական օգնություն ցուցաբերելու համար՝
  +374-60-834777
- Արցախից ժամանած երեխաների կրթություն ստանալու համար՝
  +374-10-599600
- Հայաստանում ժամանակավոր ապաստանած Արցախի քաղաքացիների սոցիալական եվ վարչական սպասարկման ու տարաբնույթ աջակցության ապահովման նպատակով՝
  +374-10-590339, 8138
- Ընտանիքում բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաների համար՝
  (010) 542828 (շուրջօրյա), 0800 80 850 (շուրջօրյա), (041) 010220 (10:00-18:30)
- Սոցիալական ապահովության ծառայություն. առցանց դիմումների համակարգ
  http://online.ssa.am/
- Սոցիալական ապահովության ծառայություն
  https://www.ssa.am/
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
  https://www.mlsa.am
- Միասնական սոցիալական ծառայություն
  https://socservice.am/#ashkhatanq-ev-zbaghvatsvouthyun%00
- ՄԱԿ ՓԳՀ-ի օգնության կայք էջ
  https://help.unhcr.org/armenia/
- Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի դրամական օգնության տրամադրման  նախագծի կայք էջ՝.
  https://news.am/eng/news/644223.html
- Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ
  https://www.arlis.am/



## Անվճար հոգեբանական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և մասնագետների ցանկ

| հ/հ | Աջակցող կառույց | Կոնտակտ |
|---|---|---|
| 1 | Հոգեբանների հայկական գիտական միավորում | +374 91 30 04 69 |
| 2 | ՋՀՎԿ/PRCS Զինծառայողների և պատերազմից տուժածների հոգեսոցիալական վերականգնողական կենտրոնը | +374 44 12 70 70 |
| 3 | Էլ-Պի հոգեբանական կենտրոն | +374 41 77 70 97 |
| 4 | «Հիլֆմանն» հոգեբանական ծառայության կենտրոն | Արման Բեգոյան<br>+374 93 55 02 99 |
| 5 | PsyLife | +374 93 34 94 23 |
| 6 | Հոգեսոցիալական կարգավորման կենտրոն | +374 10 54 40 77 |
| 7 | Ինթրա  հոգեկան առողջության կենտրոն | +374 91 26 03 54 |
| 8 | Ժեստ հոգեբանական կենտրոն | +374 98 82 14 91 |
| 9 | Վահան Սիմոնյան | +374 91 40 98 58 |
| 10 | Քրիստինե Թորոսյան | +374 93 31 01 63 |
| 11 | MHS հոգեկան առողջության կենտրոն | +374 99 11 79 75 |
| 12 | Լևոն Եղիկյան | +374 94 01 68 11 |
| 13 | «ԱՅԳ»  հոգեբանական ծառայության կենտրոն | +374 10 58 18 14 |
| 14 | Հոգեսոցիալական կարգավորման կենտրոն | +374 10 54 40 77 |
| 15 | «Ապագա»   հոգեբանական ծառայություն | +374 77 08 30 84 |
| 16 | HOMI Psychological Support Center (Գյումրի) | +374 98 01 93 39 |
| 17 | «Ինթրա»  հոգեբանական ակումբ (Գյումրի) | +374 94 64 02 97 |
| 18 | «Դիակոնիա»  բարեգործական հիմնադրամ | +374 10 34 91 96 |



**Վորլդ Վիժն Հայաստան**
Հասցե՝ Ռոմանոս Մելիքյան փ. 1, ք. Երևան, Հայաստան
Հեռ.՝ + 374 (10) 74 91 19, + 374 (60) 49 10 10
էլ.փոստ՝ wvarmenia@wvi.org
Վեբ-կայք՝ https://wvi.org/armenia